

տանէլլիի ու Սեւ ծովուն անցից միջազգային դաշինքը բնաւարարուած ըլլայ: Իրերն այնչափ յառաջ գացին մինչև շատ լրագիրք սկսան այս կամ այն տէրութեան յանտանէ Անգղիայի բռնած կամ բռնելու ընթացից մասին չափազանց լրեր հետեւին, դեսպանագիտական միջամտութիւններ երեւակայել կամ աննշանակ ու սովորական դէպքերու թիւր մեկնութիւններ տալ, որով ոգիներն անսովոր յուզմանց մէջ ձգեցին: Բայց քարեքախտութեամբ քսնի մ'օրոտն մէջ իրաց բուն վիճակն պաշտօնական կամ կէս պաշտօնական գրուածովք յայտնուելով, ոգիք հանդարտեցան:

— Օսմանեան տէրութիւնն իւր աչալորջ եւ հաւատարիմ մէկ պաշտօնական եւ հայ ազգս իւր նշանաւոր եւ մեծամուն մէկ անձը կորոյս: Յակոբ փաշա, Վեհափառ Կայսեր անձնական զանձուն տեսուչ, ամուսն 19ին իրիկունը ձիով պտրտելու միջոցին ձին խուռչելով, այնպիսի կերպով ինկաւ որ լուրիք վնասելով, քիչ մը ետքը հոգին աւանդեց: — Իրեն յաջորդ դրուեցաւ Միքայէլ Էֆ. Փորթուզալեան:

— Այսմ նման մեծ կորուստ մ'ալ ունեցե՞ք է ազգս ի Պարսկաստան: — Եսիւնթաց ամուսն մէջ մահկանացուն կնքեց՝ Ենրիման խանին, Վիեննայի Պարսից դեսպանին, երէց եղբայրն Ճիանկիի խան Պարսկական պետութեան Արուեստից պաշտօննայն, որ այնչափ սիրելի էր Վեհափ. Եահին՝ որչափ Յակոբ փաշա Վեհափ. Մուղանին, եւ այնպէս ընդհանուր համակրանք կը վայելէր թէ ազգայնոց եւ թէ օտարաց կողմանէ՛ ինչպէս հանգուցե՞ալ փաշայն: — Ենրիման խան Եահին յատուկ հրաւիրմամբն ամուսն սկիզբները դէպ ի Պարսկաստան ուղեւորեցաւ:

Մէկ մէկուկէս տարիէ վեր Գերմանիոյ կառավարութիւնը կ'ուզէր վերցընել կամ գէթ մեղմացընել այն խիստ օրէնքն որ շատ տարինսրէ վեր կը գործածուէր Գաղղիայէն Ալսաս-Լորէն գաւառն անցնող մասնապարտորդաց անցագրին նկատմամբ: Վերջապէս վերջին օրերս յիշեալ կառավարութիւնն այս օրէնքն այնչափ մեղմացուց ու չափաւորեց, որ երկու կողմանք ալ մեծապէս գոհ եղան: Առանձինն Գաղղիա-

ցից շատ ուրախացան, եւ լրագիրք իսկ սկսան աւելի քարեկամական եւ յարգական լեզու բանեցընել Գերմանիոյ Կայսեր վրայ:

Հարաւային Ամերիկայի Չիլէ հասարակապետութեան մէջ երկայն ժամանակէ վեր արինանեղ քաղաքային պատերազմ կ'ըլլար: Ժողովրդեան թագմութիւնը Պալմաստա գահերիցուն դէմ՝ ելլելով, թագմաթիւ քանակ մի գումարած՝ նոյն գահերիցուն քանակին հետ շատ անգամ կը գայնուէր: Յառաջուն ճակատները փոփոխ յաջողութեամբ անցնելով եւ եղած հաշտութեան փորձերն անօգուտ մնալով, անցեալ ամսոյն վերջին օրերը տրուած երկու ճակատներուն մասնաւոր 28ին ճակատուն մէջ գահերիցուն քանակն այնպէս չարաշար յաղթուեցաւ, որ ալ յուսանաւորութիւն Պալմաստա ուզեց փակչիլէ: Եւ թէպէտ ի սկզբան լուր տարածուեցաւ թէ փախուստն յաջողած է. սակայն յետոյ իմացուեցաւ թէ այս յոյսն ալ պարասլ ելլելով, անճասպանութեամբ վերջ տուեր է իւր կենաց:



ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

- ՌԻՍՏՈՒԿՆԵՐ**
 ՄԱՏՆԻՆԳՐԱԿԱՆ — Ստոյն-Կալիսթոնայ (Pseudo-Callisthenes) վարոց Անքթանազի ուսումնասիրութիւնը. 289:
 ԱԶԳԱԳՐԱԿԱՆ — Մեր առակց՝ հնդկականաց հետ յարաբերութիւնը. 295: — Ազգային ժողովրդական առածներ Տրակագոնի կեանքէն քաղուած. 300:
 ԹՂՊԱՅՑՈՒԹԻՒՆ — Գրիգորեան տումարք յնդկաստիթուլուիս. 301:
 ԳՐԱԿԱՆ — Հայերէն ձեռագիրք Միւնիսէն արքունի գրասան. 307:
 ԱՇԽՈՒՂԱԳՐԱԿԱՆ — Սեւանայ լճի աւազանը. 314:
- ՔՐՈՏԱԿԱՆ**
 ՄԱՏՆԻՍ ՏԱՄՈՒՂԵԾԸ. Գաւտական վէպ. 315:
- ՍՅԼԵԻՍԵԼԷ**
 ՆՈՐԱՌՈՒՐ — Գնդադի անասուններն արուեստական եղանակաւ գունաւորել. 318:
 ՏԻՏԵՍԱԿԱՆ — Ատամնացաւոյն դէմ միջոց. 319:
 ՄԱՐԱՂԱՌԻՐ — Երկաթի գոյն փոփոխականութիւնը. 319:
- ՔԱՂԱՔՈՎԱՆ ՏԵՍՏԻԹԻՒՆ** 319:



ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՆՈՒՄԱՅՈՒ ԽՈՒՐԱԳՈՐ

Վ. ՌԱՓԱԵԼ Վ. ՊԱՐՈՆՉ

Վ Ի Ե Ն Ն Ե Ն . Մ Ի Ի Թ Ր Ե Ի Ե Ն Ե Գ Պ Ե Ր Ը Ն